ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
15.10.2018Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 12 անդամները:

Բացակայում են՝ Մելիք Գասպարյանը,Տարոն Եփրեմյանը, Գագիկ Երիցյանը, Հակոբ Գրիգորյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Շ. Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը,Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:
Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2018 թվականի 9 ամսվա բյուջեի կատարման մասին հաղորդում:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Մերի Սարադյանին «Գառզուի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համաձայնություն տալու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -10 դեմ - 0 ձեռնպահ -1

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:
Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2018 թվականի 9 ամսվա բյուջեի կատարման մասին հաղորդում:

/Զեկ. Գ.Աֆյան/

Առաջարկում եմ ընդունել ի գիտություն Չարենցավան համայնքի 2018 թվականի 9 ամսվա բյուջեի կատարման մասին հաղորդումը

Համայնքի ղեկավար . Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 10 դեմ - 1 ձեռնպահ -

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2 Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 4-րդ թաղ. 3 շենքի 12 բն. բնակիչ ***Ռոզա Գալուստյանի*** 2018 թվականի հոկտեմբերի 03-ի թիվ 3077-16 դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Ռոզա Գալուստյանին:***

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Մերի Սարադյանին «Գառզուի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Շ. Սարգսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետով,առաջարկում եմ տալ համաձայնություն Չարենցավան համայնքի ղեկավարի՝ ***Մերի Սարադյանին «Գառզուի անվան արվեստի դպրոց»*** ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու առաջարկին:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ -10 դեմ - 0 ձեռնպահ -1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

5. /Զեկ. Շ. Սարգսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով և հաշվի առնելով Չարենցավան համայնքի Բջնի գյուղի վարչական ղեկավար ***Ա. Մաթևոսյանի*** 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 3117/04 գրությունը,առաջարկում եմ Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 76 որոշման 8-րդ հավելվածի 6-րդ տողի «15» թիվը փոխարինել «16» թվով

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը

Կողմ-11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ***առաջարկում եմ***. թույլատրել 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ ք.Չարենցավան 7-րդ թաղամաս 12-րդ շենք թիվ 1 շինությունը (718.1քմ մակերեսով տարածքը) ուսումնական կենտրոն և 40 աշխատատեղով ոսկերչական արտադրամասը վերագործարկելու նպատակով

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ առաջարկում եմ թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու՝ համաձայն հավելվածի:

Հ/Հ	ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ	ՄԱԿԵՐԵՍԸ ՔՄ/ծածկագիր/	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԸ	ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ
1.	Չարենցավան համայնք գ. ֆանտան	1200քմ	Բնակավայրերի այլ հողեր	Սեփականություն	316 800 ՀՀ դրամ
2.	Չարենցավան համայնք գ. Արզական	780քմ /07-015-0153-077/	Գյուղ. Արտադրական արդյունաբեր. և ընդ.	Սեփականություն	1375920 ՀՀ դրամ
3.	Չարենցավան համայնք գ. Արզական	493քմ /07-015-0103-0152/	Գյուղ. այլ հողատեսք	Վարձակալություն	Տարեկան վարձավճար 5000 ՀՀ դրամ

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ- 0** **ձեռնպահ-1**

Բաբայան Վալերի

Բաբայան Նարեկ

Գասպարյան Անատոլի

Դավթյան Կարեն

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Խլղաթյան Արսեն

Պողոսյան Մնացական

Սահակյան Երեմ

Փանոսյան Արթուր

Վարդանյան Նորիկ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Շ. Սարգսյանը _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**